



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 02/17**

29.03.2017թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), քննարկելով «Ավտոտրասնպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 18.05.2010թ., ուժի մեջ է մտել 29.06.2010թ., ՀՕ-63-Ն)¹ 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Լառա Մովսեսյանը (այսուհետ՝ Դիմող) անհատական սահմանադրական դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է որոշել «Ավտոտրասնպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 18.05.2010թ., ուժի մեջ է մտել 29.06.2010թ., ՀՕ-63-Ն)² 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողը գտնում է, որ «Ավտոտրասնպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 6-րդ, 28-րդ, 39-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 78-րդ հոդվածներին:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2010.06.16/26(760)

² Տե՛ս ՀՀՊՏ 2010.06.16/26(760)

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթում առկա **«ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել»** ձևակերպումը «մարդու նկատմամբ առաջադրվող անհիմն մեղադրական եզրույթ է, դրանում առհասարակ բացակայում է ապացուցման հիմքեր պարունակող պահանջը, և այդ անհիմն պահանջից բխող՝ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ ֆինանսական անհիմն հետևանք է ստեղծվում»:

Դիմողի կարծիքով՝ «ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող ավտոտրանսպորտային միջոցն երրորդ (այլ) անձին շահագործման նպատակով հանձնելն օրենքով արգելված չէ, և այդ իրավունքի իրացման արդյունքում, եթե ավտոմեքենան տիրապետողն այն օգտագործի այլ նպատակներով՝ սեփականատերը չի կարող տեղյակ լինել դրա մասին: Ուստի ... այս առումով օրինական չէ, որ օրենքով սահմանվի ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը «ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնող» որակել և նրա վրա ակնհայտ չհիմնավորված ֆինանսական պարտավորության բեռ դնել»:

Դիմողի դիրքորոշմամբ՝ վիճարկվող դրույթն իրավական որոշակիության տեսանկյունից վիճահարույց է, ինչի արդյունքում խախտվում են Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մարդու հիմնական իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ սեփականության և արդար դատաքննության իրավունքները:

Ուստի, Դիմողը խնդրել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 6-րդ, 28-րդ, 39-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ա) Իրավական որոշակիության սկզբունք

Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող դրույթի սահմանադրականությունն անհրաժեշտ է նախ գնահատել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Իրավական որոշակիության սկզբունքն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 73-րդ, 79-րդ հոդվածներում:

Այսպես,

Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը

1. Անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է գտել նաև ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածում, որի համաձայն՝

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման **անբաժանելի տարրերը**: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:¹

Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող՝ «Ավտոտրասնպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝

Հոդված 27. Ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքը

1. *Ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի՝*

...

2) *վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե՝*

...

դ. ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սույր տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանը ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչև ապահովագրական պատահարը...:

Անհատական սահմանադրական դիմումով բարձրացվում է մասնավորապես վիճարկվող դրույթի **«ակնհայտ սույր տեղեկություններ է հայտնել»** ձևակերպման իրավական որոշակիության խնդիրը:

Այդ կապակցությամբ հիմնական իրավական հարցադրումն այն է, թե արդյո՞ք «ակնհայտ սույր տեղեկություններ է հայտնել» օրենսդրական ձևակերպումը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին և այն անհստակ է այնքան, որ թույլ չի տալիս անձին դրան համապատասխանեցնել իր վարքագիծը և, դրանով իսկ, անկանխատեսելի է դարձնում վերջինիս իրավաչափ սպասելիքները:

ՀՀ օրենսդրությամբ և իրավակիրառ պրակտիկայում «ակնհայտ», «սույր», «ակնհայտ սույր տեղեկություններ», «ակնհայտ կեղծ» և համանման այլ եզրույթները լայնորեն օգտագործվող իրավական կատեգորիաներ են (տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

օրենսգիրք, հոդվածներ 314, 333, 338, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք, հոդված 54, ՀՀ դատական օրենսգիրք, հոդվածներ 159, 215, 218 և այլն):

Օրենսդրական համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ **«սույր (կեղծ) տեղեկություններ հայտնել» նշանակում է՝** հայտնել տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, այսինքն՝ ճիշտ չեն, սխալ են, **«ակնհայտ սույր (կեղծ) տեղեկություններ հայտնել»** նշանակում է, որ տեղեկություններ հաղորդելիս անձը գիտակցում է, որ իր տրամադրած տեղեկատվությունը ճիշտ չէ, սխալ է, չի համապատասխանում օբյեկտիվ իրականությանը:

Սույն գործով վիճարկվող օրենսդրական կարգավորման պահանջն այն է, որ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ապահովագրական պայմանագիր կնքելիս ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը՝ ապահովագրողին, ապահովագրողին հայտնի բացառապես իրականությանը համապատասխանող տեղեկություններ, որպեսզի վերջինիս՝ որպես պայմանագրի կողմի, հնարավորություն ընձեռի ճիշտ գնահատել իր ապահովագրական ռիսկերը և ապահովագրական պայմանագիրը կնքել այնպիսի պայմաններով, որոնք իր համար ընդունելի են՝ ելնելով իրեն ներկայացված տեղեկատվության գնահատականից: Հակառակ պարագայում, եթե հետագայում պարզվի, որ ներկայացված տեղեկատվությունն ակնհայտորեն չի համապատասխանել իրականությանը, առաջացող բացասական հետևանքները, այն է՝ սուբրոգացիայի կարգով ապահովագրի կողմից ապահովագրողին փոխհատուցելու պարտականությունը, կրում է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունը տրամադրած կողմը՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր ապահովագրողը: Սա բխում է պայմանագրի ազատության և տնօրինչականության քաղաքացիաիրավական սկզբունքներից և ուղղված է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը:

Տեղեկությունները, որոնք ապահովագրի կողմից ներկայացվում են ապահովագրողին ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս, ի թիվս այլ տեղեկությունների, ներառում են նաև ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ և վարորդի վերաբերյալ տվյալները: Այդ տվյալներն ապահովագրողի համար էական են ապահովագրական ռիսկայնության գնահատման, ապահովագրավճարների համակարգի ընտրության, ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած վնասների հատուցման գործընթացի կազմակերպման համար:

Վիճարկվող իրավակարգավորումը, կարծում ենք, իրավական որոշակիության տեսանկյունից կասկած չի հարուցում և լիովին բխում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավահավասարության սկզբունքներից: Այն ըստ էության ապահովագրողին ազատում է այն բացասական հետևանքներից, որոնք կառաջանան իրեն սխալ տեղեկատվություն տրամադրած ապահովագրի մեղքով՝

դրանք դնելով ապահովագրի վրա, միաժամանակ, ապահովագրին պարտավորեցնում է ապահովագրական պայմանագիր կնքելիս ապահովագրողին հայտնել ճիշտ տեղեկություններ՝ իր ապահովագրական ռիսկերը գնահատելու և ներկայացված տեղեկատվությանը համապատասխան ապահովագրական պայմանագրի պայմաններն ընտրելու և առաջարկելու համար:

բ) Սեփականության սահմանադրական իրավունք

Սույն գործով վեճի առարկա իրավադրույթները քննության առարկա պետք է դարձվեն նաև սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումների տեսանկյունից:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

...

Սեփականության իրավունքի տարրերը հանդիսացող տիրապետման, օգտագործման, տնօրինման քաղաքացիաիրավական իրավազորությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այլ կերպ կարելի է ասել, որ տնօրինման իրավունքը սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու հնարավորությունն է:

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանն իր մի շարք որոշումներում անդադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, իր 18.03.2008թ. թիվ ՍԴՈ-741 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նաև նշել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և

սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»:**

«Տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք: Դա ոչ այլ ինչ է, քան հայեցողություն կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում և օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք:** Սակայն, այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել և չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը»¹:

Սույն գործի հանգամանքներով իրավական հարցադրումն այն է, թե արդյո՞ք վիճարկվող դրույթը խախտում է անձի սեփականության սահմանադրական իրավունքն այնքանով, որքանով ապահովագրական ընկերությանը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է վերապահում վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե վերջինս ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրողին:

ԱՊՊԱ պայմանագիր կնքելիս թե՛ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, և թե՛ ապահովագրական ընկերությունն իրացնում են իրենց գույքային իրավունքները՝ սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա: Որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցներ՝ վերջիններս դրսևորում են կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն՝ փոխադարձ կամահայտնությամբ որոշելով պայմանագրի պայմանները: Ընդ որում, պայմանագրի պայմանների շուրջ համաձայնվելիս՝ կողմերը ելնում են նրանից, որ ներկայացված տեղեկատվությունը համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը, և կողմերի կամքն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն այն տեղեկությունների բովանդակությունը հաշվի առնելով, որոնք կողմերը երկուստեք տրամադրել են միմյանց: Եթե կողմերը միմյանց տրամադրել են ակնհայտ սուտ՝ իրականությանը

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. թիվ ՍԴՈ-1009 որոշում:

չհամապատասխանող տեղեկություններ, ապա օրենքն այդ փաստի հետ կապում է որոշակի բացասական իրավական հետևանքներ այն կողմի համար, որը տրամադրել է այդպիսի տեղեկություններ:

Տվյալ դեպքում, ապահովագրի կողմից ԱՊՊԱ պայմանագրի՝ ակնհայտ սուտ տեղեկություններ հաղորդելու դեպքում ապահովագրողի հետադարձ պահանջի իրավունքի վերաբերյալ պայմանին համաձայնվելն ինքնավար կամքի դրսևորում է և այդ պայմանի բացասական հետևանքները կրելու ռիսկի ընդունում, ինչը սեփական հայեցողությամբ իր գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքի բովանդակության մասն է կազմում: Ուստի, նման պայմաններում անձի՝ ապահովագրի սեփականության իրավունքի խախտման վտանգի հարց, կարծում ենք, չի ծագում:

գ) Դատական պաշտպանության իրավունք

Դատական պաշտպանության, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

15.07.2011թ. թիվ ՍԴՌ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը մերն է՝ Գ.Կ.):

Կամ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՌ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ «Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ

անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»¹:

Ըստ Եվրապական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն, այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների

¹ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»¹:

Սույն անհատական դիմումով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը, մասնավորապես՝ անձի դատական պաշտպանության իրավունքը սահմանող սահմանադրական նորմերին համապատասխանության տեսանկյունից առաջադրվող իրավական հարցադրումն այն է, թե արդյո՞ք խախտվում է անձի դատական պաշտպանության իրավունքն այնքանով, որքանով ավազակադրի կողմից ապահովագրողին *ակնհայտ սուտ տեղեկություններ հայտնելու դեպքում* ապահովագրիրը կրում է առաջացող բացասական հետևանքների ռիսկը:

Ինչպես արդեն նշել ենք, վիճարկվող դրույթը իրավական որոշակիության տեսանկյունից, մեր կարծիքով, վիճահարույց չէ: Այն, թե ներկայացված տեղեկություններն ակնհայտ սուտ են, թե ոչ, ընդհանուր իրավասության դատարանի իրավասությանը վերապահված խնդիր է, որն իրականացվում է ազգային օրենսդրությամբ սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատավարական ընթացակարգերին և պայմաններին համապատասխան: Այս առումով, ազգային դատավարական իրավունքում սահմանված մեխանիզմների արդյունավետությունը խնդրահարույց չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Ավտոտրասնպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ: